

նոր փառքովը զուարճանալով, զնոյն իրեն յատուկ ըրած ըլլալուն համար, և ոչ անպատճառ, որովհետև ինքն ալ նոյն փառաց մէջ իր մասն ունէր: Եթէ Գիւլիէ գոնէ տեղ մը իր այս խոնարհամիտ բարեկամը յիշած ըլլար, քեզի խօսք չէի ըներ հիմա, սակայն չէ կըրցած ժամանակ մը գտնելով գոնէ անգամ մը նշանակել այդ ամենօրեայ վառ տակակցին անծանօթ անունը. և այդ այնչափ աւելի դէշ բան մըն է՝ որչափ Գիւլիէ այն սուտանուն մեծ մարդիկներէն չէր, որ իրենց փառացը վրայ անվստահ ըլլալով՝ զնոյնը ուրիշի հետ հաւասարաբաժին ընել չեն ուզեր: Անոր համար ես ալ 'ի պատուհաս անոր որոշեցի այդ անունը քեզի սորվեցնելու, քեզի որ դեռ ևս այնչափ քիչ բան գիտես: Կը փափաքիմ որ այդ պատուհասը կարենար քեզի դաս մը ըլլալ ժամանակաւ, թէ պէտք չէ անոնք ուրանաս որ պարծանք բերող գործի մը մէջ քեզի օգնական եղան: Այդ բանը միշտ դուրս կ'ելլէ:

Կը շարունակուի:

ՍԿԻՋԲՆ ԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

(Տես Հատ. ԻԹ. էրես 141.)

ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

Յայսմ աւուր յիշատակ է վեցերորդ աւուր արարչութեանն Աստուծոյ: Յորում աւուր ասաց Աստուած՝ հանել շունչս կենդանիս ամենայն երկրի: Փառք ամենազօր կամաց արարչին. որ 'ի նուաստագունիցն սկսեալ, 'ի մեծագոյնսն ել արարչութեամբ: Զբոյսս և զտունկս արար յերկրի. և ապա զուսաւորս յերկինս: Յետոյ զլրայինս և զօղայինս՝ և ապա զցամաքային կենդանիքս՝ որ մեծ և պատուականագոյնք են քան զնոսա. վասն զի աւելի մասն կենաց ունին. և զգայութիւնս մտաւորս բանաւորաց: Բայց գիտելի է. զի նշան կենդանութեան է տուեալ յԱստուծոյ

'ի քարն մագնիտ որ է անդամանդն. և այն կենդանական նշանօքն բռնէ զերկաթն: Եւ ապա 'ի բոյսս և 'ի տունկս ետ Աստուած զնշան կենդանութեան. և ապա 'ի կառարոյսս և 'ի խեցէմորթս՝ որք միով զգայութեամբ են, և թոք և փորոտիք կոչին երկրի. և ապա յաւելւածով 'ի մեծամեծ մարմինս և 'ի կարօղսն շրջել հեռագոյնս. և ապա ըստ կարգի ելանէ 'ի չորքոտանիսն, զորոց յերրորդում աւուր զգարմանս պիտոյ յիցն բուսոյց՝ և 'ի վեցերորդի աւուրս զվայելողսն զանասունս՝ որ խոտաբուսք են. և ապա զգազանս զկերօղս անասնոցն: Եւ անասունք ասին վասն թ պատճառի. նախ՝ զի անխօք են և ասել ոչ ունին, և թ, զի անանունդք են 'ի մարդկանէ: Եւ սողունք ևս վասն թ պատճառի ասին, նախ զի կարճոտնեայք են. և շատք՝ անոտք, որ 'ի վերայ լանջացն սողան որպէս օձն յետ անիծիցն. զի նախ օձն ոտնաւոր էր և թեւաւոր՝ և ապա 'ի պորտն սողալ էառ հրամանս: Եւ թ պատճառ սողնոցն այն է՝ որ ձայնիւ սողեն՝ այսինքն սղան: Որպէս և գազանք, վասն թ պատճառաց. նախ՝ զի պատառօքք են. և են ոմանք որ պատառածոցն գէղ ասեն. և թ, զի անճոռնիք են, կոպիտք և անհեթեթք: Որպէս ասեն զբոնոնոսն նման եզին որ զկուն ձգէ և զմարդն այրէ. և այլ գազան կայ՝ որ զմազն ձգէ և զորսորդն սպանանէ. որպէս ողնին որ զփուշն ձգէ: Գոն և այլ գազանք կարծեղջիւրք և սուրք՝ որ զապառաժն տաչէ: Եւ քեզ վկայ խոզն վարազ. զի յընդեւական իրաց հաստատեսցի և հուատարիմ լիցի անսովոր խապարս: Եւ 'ի Հապաշաստան ասեն գոլ վիշապամարդք, և այծամարդք, ոտն այծու՝ և այլ հասակն ձիոյ: Եւ են որ ձեն ձիոյ է՝ և կերպարանն մարդոյ՝ և մի եղջիւր 'ի զլուխն ունին. և եղջիւրն նման է ցրուկոյ, այս ինքն իբրև զդունչ՝ զլսողն լի երկայնեալ 'ի ճակատն 'ի վեր: Են և այլ ահագնատեսիլ գազանք. յորոց և զոմանս ետես սուրբ հայր Անտոն 'ի գնալն առ Պօղոս: Եւ սալամանդր գա-

զան՝ զհուրն որպէս զապուր ուտէ՝ և ոչ այրի։ Եւ այլք բազումք ցեղք ցեղք և պէս պէս, որպէս և ասէ թէ ըստ ազգս իւրեանց։ Զի յատկանան տեսաւ զգը՝ որ մի են սեռիւ, զազան անուամբն և բնութեամբ։ Եւ անասունք և սողունք՝ որք ոչ ունին թիւս համարոյ՝ թէպէտ և չճազգ ասեն։ Որք ընդ լինելն դիմեցին 'ի դաշտս, և 'ի լերինս, 'ի շամբս և 'ի մացառս, 'ի պրակս և 'ի մայրիս. առ ծովափս և 'ի գետափսն, յակունս աղբերաց, 'ի յայրս և 'ի ծերպս վիմաց. 'ի դարափորս և 'ի ծործորս երկրի. ըստ բարոյիցն և ըստ պիտոյիցն։ Ոմանք վասն համարձակութեան և կէպ վասն ահի և երկչոտութեան, որջ որոնեցին՝ և զտեղի առին, կաղաղս և դադարս՝ բոյնս և ծակս։ Եւ 'ի ստեղծանիլն բշտ զական և բարբանջողական ձայնս բարձին, կանչելով, ոռնալով, հաջելով. բառաջելով, կրծկրնծալով, խրխրնջալով, զըռնջալով, սուլելով, կըռնջալով, լցին զօդդ խառնելով ընդ երգս և ընդ բարբառս ճրուողական և բշտական հաւուց գեղգեղեալ և զանազանեալ թռչնոց։

Եւ ետես Աստուած զի բարի է։ Յամօթ այնոցիկ որ մեղադրեն արարչին՝ թէ ընդէր արար զգազանսն. վասն որոյ ցուցանէ՝ զպատճառաւ բարի գոլ զարարածս Աստուծոյ։ Նախ՝ զի 'ի փառս Աստուծոյ արարան. որ 'ի տեսանեցն հրեշտակաց և մարդկան զահագին կենդանիսն՝ փառս տան ստեղծողին։ Երկրորդ՝ զի ստեղծան յահ և 'ի սասան ամբարիշտ մարդկան։ Երրորդ՝ վասն պիտոյից բժշկութեան, որպէս զթրիակն որ յօձից առնուն, նոյնպէս և յամենայն գազանաց իր մի 'ի պէտս բժշկութեան առնուն մարդիկ։ Որպէս և ինքեանք իսկ գազանք և անասունք 'ի բնութենէ ունին՝ և գիտեն զհնարս բժշկութեան իւրեանց։ Զի ինծն մաքրէ զմաղձ իւր արեամբ վայրի այծու, և ուղտ զայրած մաղձ իւր փոխէ կանգար ուտելով. և շուն դալար սէզ ուտէ. և զսեաւ մաղձն իւր ձգէ։ Գայլն հող ուտէ. և նապաստակն փնդռունս։ Ա-

ռիւծն՝ զմայմունս. և նա զգորտն։ Նոխազն՝ զասկամոն և արագիլ զօձ ուտէ և ոչ մնասի։ Եւ այսոցիկ յետոյ ընդ մեղանչելն ադամայ՝ ատելիք դարձան իրերաց և թշնամիք եղեն միմեանց։ Իսկ յառաջն ոչ այսպէս՝ այլ ծնանէին և սնանէին՝ հաշտ և համարոյր. աճէին ընդ միմեանս՝ անահ և անկասկած՝ վայրիք և ընտանիք վայելէին 'ի միասին. ճընճողուկ ընդ վարուժանի, և կաքաւ ընդ բաղէի, եզն և առիւծ՝ 'ի միասին ճարակէին, և ինծն առ ուլու մակաղէր. և խնամն աստուծոյ պահէր զմիաբանութիւնն նոցա։ Ոչ սուգ և ոչ տրտմութիւն. այլ 'ի մեծի զուարթութեան կային։ Բայց իշխանն նոցա թագաւոր ամենայնի Ադամ ոչ էր 'ի միջի։ Եւ ասաց Աստուած՝ արասցուք մարդ ըստ պատկերի մերում, և ըստ նմանութեան տեսն զսէրն Աստուծոյ 'ի պատիւ մարդոյն՝ զոր ոչ արար ումեք յեղելոց. և խորհրդակից առնու՝ ոչ զդք եղական, այլ զանեղակից բանն իւր համագոյ, և զանհասութեան իւրոյ քննօղն զամենասուրբ հոգին։ Եւ ասաց։ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան։

Աստ երևի՝ թէ ոչ յիւր կարօտութեան լրումն արար Աստուած զարարածս. այլ վասն մարդոյն զոր առնելոց էր։ Եւ ոչ նախ ցնա արար, զի մի 'ի թափուր և յունայն վայր մոծանիցէ ցնա և նա տրտմութեամբ նեղասրտի։ Եւ դարձեալ թէ դք մեծ թագաւորի պատիւ առնէ, նախ պատրաստէ զտունն զբազմականն, զկերակուրսն և զըմպելիսն, զաշտանակս ճրագացն, և զերգեցիկս դուսանացն, և յորժամ յօրինէ զամենայն, ապա ածէ զթագաւորն 'ի ներքս առ 'ի ցուցանել՝ թէ 'ի պատիւ և 'ի փառս մեծարեցաւ։ Այսպէս արար Աստուած առ մարդն Ադամ. զի ծանիցէ զսէրն և զերախտիսն Աստուծոյ. վասն որոյ ասէ։ Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան։

Ընդ այս բարբառ և հրեշտակք զարմացան. և չ, իրս ուսան. նախ՝ զի բարերարութիւնն Աստուծոյ անբաւ է, և

չէ՝ զի զօրինակ ամենայն արարածոցս եցոյց 'ի մի մարդն յԱդամ, հոգւովն զիմանալեացն էութիւն, և մարմնովն զզգալեացս:

Ասաց Աստուած հայր՝ թէ արասցուք մարդ: Եւ արար որդին Աստուած զադամ՝ 'ի պատկեր իւր՝ ըստ պատկերի Աստուծոյ հոգւովն արար զնա: Եւ այսպէս իմացեալ հաւատամբ զերրորդական անձնաւորութիւնն մի աստուածութիւն: Չհայր Աստուած, որպէս զմիտ: Եւ զորդին Աստուած, որպէս զբան: Եւ հոգին Աստուած, որպէս հոգի. որ կենդանութիւն է մարդոյն: Չի մարդս այս, երիւքս ճանաչի թէ մարդ է, միտ, բան և հոգի, և թէ յերիցս մինն պակաս լինի չէ կատարեալ մարդ: Չի թէ միտ չունի՝ անասուն է. և թէ բան չունի, մուկ է. և թէ հոգի չունի, մեռած է: Իսկ եթէ մարդս՝ որ Աստուծոյ պատկեր է՝ առանց այս երիցս չէ մարդ: Այսպէս իմացիր և զսկզբնատիպն Աստուած, որ ասաց. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում:

Յամօթ լիցին որք ոչ ասեն չէ անձինք զաստուածութիւնն, և թէ մինն նման է երկիցն, նոքա զիւրդ ոչ իցեն մի և նմանք միմեանց: Դարձեալ զի թէ մի պատիւ, և մի բնութիւն է մարդոյն. և չիք 'ի նմա մասն ինչ խոտան և անպիտան. 'ի սմանէ ճանաչի և մարդ արարն: Չի մերումն ասելովն՝ զերիս անձինսն յայտնեաց. և այն որ ասէ 'ի պատկեր իւր, զմիութիւն բնութեան և զաստուածութեանն եցոյց:

Եւ թէ որով է մարդս պատկեր Աստուծոյ. ոչ այլ ինչ իրօք, քան թէ հոգւովն. և այն բազում պատճառաւ: Նախ՝ զի անմարմինն է. չէ, զի անմահ է. չէ, զի անտեղի է. չէ, զի անգիտելի է. Ե, զի մտաւոր է. չէ, զի անձնիշխան է. Է, զի անուրեք է. Ը, զի յամենայն ուրեք է և ոչ ուրեք. Թ, զի անտես է. Ժ, զի անմեղ է. Ժա, զի բանաւոր է. Ժբ, զի մարդակերպ երևեցաւ 'ի ստեղծանելն Ադամայ. Ժգ, զի ուղիղ է ձև մարդոյս. ուղիղ է և Աստուած մեր. Ժդ, զի Աստուած տեսող է ամենայնի:

Եւ արար մարդոյս զգայարանս տեսանել և լսել. զի տեսանէ զգործս Աստուծոյ և փառաւորէ զնա. Ժե, զի տէր և իշխան կացոյց զմարդն 'ի վերայ զգալի արարածոց իւրոց. Ժզ, զի ընդ ամենայն տեղիս է հոգին 'ի մարմինն: Որպէս և Աստուած յէակա ամենայն: Չի բոլորն 'ի բոլորն է՝ և բոլորն յիւրաքանչիւր մասունս: Այսու ամենայնիւ հոգիս մարդոյ՝ նման է Աստուծոյ. և ոչ բնութեամբ. քանզի պատկեր Աստուծոյ ըստ բնութեանն էութեան՝ միածինն միայն է և ոչ Ադամ:

Արու և էգ արար զնոսա Աստուած. այս օտար է յԱստուծոյ՝ այլ և 'ի հրեշտակաց և 'ի հոգւոյս մերոյ: Բայց զի նախատես է Աստուած. և զիտէր զանկանել մարդոյն 'ի նմանութենէ Աստուծոյ և 'ի հրեշտակաց և զհաւասարելն անասնոց. վասն այսորիկ արու և էգ արար զնոսա. զի այնու աճեսցին. թէպէտ և զԵւա դեռ չէր ստեղծեալ. այլ զԱդամն ընդ զլիւյն ասաց. զի չեղեալն իբրեւ զեղեալ է Աստուծոյ: Վասն որոյ օրհնեաց և զլինելոցն ընդ եղեալն և ասաց:

Աճեցէք և բազմացարուք: Եւ այս հրաման ևս՝ գործ է կատարեալ. քանզի զթիւ համարոյն և զորպիսութիւն աճման իւրաքանչիւրոցն ետես՝ անխառն և անշփոթ 'ի մինն Ադամ. և եդ 'ի վերայ զօրհնութիւնն զբաւական աւելով:

Աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր, և ոչ զդրախտն. զոր քաջ զիտէր թէ վաղագոյն ելանելոց էր 'ի դրախտէն: Այլ և աճելն և ընուն զերկիր ոչ միայն վասն բազմանալոյն մարդկան միայն ասէ, այլ և վասն զարդարելոյն զերկիր. շինելով և տնկելով 'ի գործ վայելչութեան և պիտոյից:

Եւ տիրեցէք դմա. զի 'ի գործելն զերկիր՝ հնազանդիպահելով զչինուածն և զսերմանսն, և զտունկսն զոր սերմանեն՝ և տնկեն, անդէն հասուցանէ զպրտուղն բազմապատկելով իբրեւ զծառայ:

Եւ իշխեցէք ձկանց ծովու և թռչնոց

երկնից, Բստ կարգի ստեղծման կեն-
դանեաց՝ և զիշխանութիւնն տայ: Նախ
զձկանց ծովու՝ և զթռչնոց երկնից որ
'ի ջրոց գոյացան. և ապա զանասնոց և
զգազանաց որ 'ի հողոյ: Բայց թէ և են
գազանք որ այժմ ընդդիմանան մարդ-
կան՝ այլ ոչ նախ որքան իշխէր մարդ
իւրում՝ ախտին. որ է 'ի մեզ գազա-
նային և անասնային, սրտմտականն և
ցանկականն: Եւ արդ ևս վախեն և սա-
սանին որպէս 'ի տէրանց, թող զորս որ
ընդ ձեռամբ հասարակաց մարդկան 'ի
լուծ և 'ի կիթ և 'ի բեռնակրութիւն:
Եւ այն որ 'ի գազանաց և յանասնոց
յարձակին 'ի վերայ մարդկան՝ անձանց
իւրեանց զգուշանան. և յերկիւղէ դի-
մեն 'ի մարդ՝ և ոչ թէ պատրաստին
ֆրասել մարդկան: Վասն որոյ 'ի վայ-
րենեացն ևս կարեն ձեռնընդել առնել
մարդիկը:

Տես և զաղնըութիւն իշխանին օտա-
րակերպ յիշխեցելոցն: Զի չէ ժանեոր,
և ոչ ցուկաւոր. ոչ թեւաւոր և ոչ ճապ-
ռաւոր. ոչ մազլաւոր և ոչ ճիրանաւոր,
ոչ եղջիրաւոր և ոչ պղնձաւոր. այլ
մերկ՝ փափուկ և դիւրապատահ. որ
ամենայնիւ ցուցանէ զձե թագաւորի:
Զի մտաւոր են և բանաւոր: Եւ թէ կա-
մին մերձ լինին Աստուծոյ. յերկինս
բարձանց և 'ի խորս անդնդոց յածեալ
չըլին. ընդ լուսաւորս պայծառանան.
ընդ Աստուծոյ և ընդ հրեշտակաց խօ-
սին. զբնութիւնս արարածոց քննեն. և
զԱստուծոյն հարցանեն. դիւաց սաս-
տեն՝ և հալածեն. և 'ի հեռուստ խօսին
'ի ձեռն գրոց: Բարութեան յուսան
վասն անմահութեան հոգւոյն. և թո-
ղութեան մեղաց հանդիպին վասն տկա-
րութեան մարմնոյն. զբարութիւնս ծո-
վու և ցամաքի վայելեն: Բաստուածա-
նալն վիճակ հասանել հաւատայ. և
զԱստուած տեսանել որքան և է աւե-
տիս ունի: Եւ ով կարէ ճառել զմեծու-
թիւն մարդոյն՝ քան թէ նա որ պա-
տուեաց զնա այնչափ մեծութեամբ,
նա միայն գիտէ զգովութիւն ներքողի
նորա: Եւ նա որ այնքան պատճառով
ճոխացաւ, և այնքան փառք զարդարե-

ցաւ, խափանօք չարին յամենայնէ զըր-
կեցաւ, և մահու գրաւեցաւ:

Եւ արդ՝ դիտելի է. զի յուրբաթու
առաւօտին, 'ի նոյն աւուր Ադամ՝ ստեղ-
ծաւ 'ի հողոյ՝ ձեռամբն Աստուծոյ: Եւ
յերրորդ ժամու 'ի սոյն աւուր ուրբա-
թու՝ Եւա 'ի կողիցն Ադամայ առաւ ձե-
ռամբն Աստուծոյ՝ և կին ստեղծաւ: Եւ
յետ, Դս, աւուր յուրբաթու 'ի դրախտն
եղաւ: Եւ յուրբաթու դարձեալ յեր-
րորդ ժամու կինն Եւա 'ի յօձէն խա-
բեալ 'ի պողոյն կերաւ՝ յորմէ հրաժա-
րեցաւ Աստուծոյ պատուիրանաւ: Եւ
'ի նոյն ուրբաթու տեսեալ Ադամայ
զկինն մերկացեալ վասն ճաշակման
պողոյն. և նա վասն կնոջն սիրոյն՝ ա-
ռեալ եկեր 'ի պողոյն ձեռամբ կնոջն՝
և ոչ իւրովի, և երկդրինն մերկացան 'ի
փառացն առաջին. և փախուցեալ յօտ-
նաձայնէն Աստուծոյ ընդ թղենեան
պարտակեցան և տերևովն ծածկեցան:
Եւ յայնմ աւուր յիններորդ ժամու ե-
կեալ տէրն 'ի դրախտն՝ հարցանէր թէ՝
Ադամ ո՞ւր ես: Եւ պատժեալ անիծիւք
եհան արտաքսեաց զԱդամ 'ի դրախ-
տէն. և ձգեաց յերկիր ուստի առաւ.
զի հող էր և 'ի հող դարձաւ: Վասն
այնորիկ եղաւ անուն վեցերորդ աւուրս
ուրբաթ. որ է կազմութիւն մարդոյն:
Եւ դարձեալ ուրբաթ, որ է օր բօթ,
որ արդարեւ՝ տվաւ բօթ մեղուցեալ մար-
դոյն ճաշակման պողոյն. որ և 'ի փա-
ռացն մերկացաւ և 'ի դրախտէն ար-
տաքսեցաւ: Վասն որոյ և տէրն Ադա-
մայ եկեալ յայսմ աւուր վասն սիրոյն
Ադամայ չարչարեցաւ և խաչեցաւ 'ի
փառս փրկութեանն Ադամայ և ծննդոց
նորա՝ օրհնեալն յամենայն գոյից Աս-
տուածն կուսածին մարդն Յիսուս Քրիս-
տոս, որ է օրհնեալ յաւիտեանս ամէն:
Քրիստոս Աստուած՝ քո սուրբ արար-
չութեանդ և մարդեղութեանդ շնորհիւ
ողորմեա ըստացողի գրոյս:

Կը շարունակուի: